Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել է քաղաքացիական դատավարություն բաժնի 19-րդ, 16-րդ, 30-րդ հարցերը, քաղաքացիական իրավունք բաժնի 38-րդ, 42-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 15

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով:

Հարց 16

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 6-րդ մասով:

Բացի այդ, հարցը վերաբերում է ոչ թե դատական նիստի տեսաձայնագրմանը, այլ՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոց կիրառված լինելուն:

Հարց 30

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով 21.02.2020 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք դատարան դիմելու հարցում իրավական շահագրգռվածությունը կարող է համարվել նախադատելի նշանակություն ունեցող փաստ, արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով դատարանը պետք է պարզի հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Ընդ որում, նշված հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է իրավունքների դատական պաշտպանություն հայցող կողմը՝ հայցվորը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ որոշ դեպքերում հայցվորի շահագրգռվածությունն ապացուցման ենթակա չէ: Նշվածը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ միևնույն դատավարության մասնակիցների միջև նույնաբնույթ նյութահիրավական հարաբերությունից բխող նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող վեճով նախկինում քննված մեկ այլ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Այդ դեպքում օրինական ուժի մեջ մտած վճիռը կանխորոշիչ նշանակություն է ունենում նոր քաղաքացիական գործի քննության ընթացքում հայցվորի շահագրգռվածության հարցի համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ նման մոտեցումը նպատակ է հետապնդում բացառել միևնույն հանգամանքի (հայցվորի իրավական շահագրգռվածության) վերաբերյալ հակասական դատական ակտերի գոյության հնարավորությունը՝ ապահովելով իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը:

Քաղաքացիական մասնագիտացման բաժին

Հարց 38

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հարց 42

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում (ըստ խնդրի փաստական հանգամանքների Ա-ի կողմից կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջը Ա-ի՝ անգործունակ ճանաչվելուց հետո դատարան է դիմել Ա-ն), ենթադրելի պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից, քանի որ հետագայում անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել նրա խնամակալի հայցով, եթե ապացուցված է, որ գործարքը կնքելու

պահին քաղաքացին ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք, իսկ ինչպես հետևում է խնդրի փաստերից, Ա-ի խնամակալ է հանդիսացել Գ-ն, սակայն պահանջը դատարան է ներկայացվել Ա-ի կողմից:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ հավակնորդի փաստարկները հիմնավոր են, ուստի միավորը ենթակա է վերանայման:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 5784 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի.

Քաղաքացիական իրավունք բաժնի 42-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ